

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե»

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 48/2

13 նոյեմբերի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Արտուշ Պապոյանի 02.11.2012թ. թիվ Ա/Ձ-07 դիմում-բողոքը «ԿԱ ՊԵԿ Արթիկի ՏՀՏ 23.10.2012թ. թիվ 1001930 ստուգման ակտի դեմ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 26.12.2011թ. թիվ 1001930 հանձնարարագրի Ա/Ձ Արտուշ Պապոյանի մոտ կատարվել է քյուլքեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող «Օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 23.10.2012թ-ին կազմվել է թիվ 1001930 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ): Ստուգման ակտով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 19.647.800 դրամ, այդ թվում՝ եկամտահարկի գծով ընդամենը 13.693.600 դրամ, ավելացված արժեքի հարկի գծով՝ 2.146.400 դրամ և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով՝ 3.807.800 դրամ:

Ստուգման ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ Ա/Ձ Արտուշ Պապոյանը համաձայն դիվերային պայմանագրի ստուգվող ժամանակաշրջանում «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ընկերությանը մատուցել է ծառայություններ, որոնց դիմաց դուրս է գրել հարկային հաշիվներ: Ըստ ԱՁ-ի կողմից ՏՀՏ ներկայացված տարեկան եկամուտների մասին հայտարարագրերի ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտները կազմել են 2008թ.՝ 28170000 դրամ, 2009թ.՝ 23689000 դրամ, 2010թ.՝ 20980000 դրամ, իսկ համապատասխան ժամանակաշրջանի ընդամենը ծախսերը 2008թ.՝ 23255000 դրամ, 2009թ.՝ 20543000 դրամ, 2010թ.՝ 20245000 դրամ:

Ըստ ԱՁ-ի կողմից ներկայացված տեղեկանքի, սկզբից 51, հետագայում 27 տնտեսավարող սուբյեկտներ իրեն մատուցել են ծառայություններ 2008թ.՝ 20744000 դրամ, 2009թ.՝ 20060000 դրամ, 2010թ.՝ 16791000 դրամ, որոնց գումարներից էլ որպես ծախս ներառվել են համապատասխան ժամանակաշրջանի տարեկան եկամուտների հայտարարագրում:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ծառայություններ մատուցած /հաշիվ ապրանքագրեր դուրս գրած/ տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ թվով 44, կատարվել են հանդիպակաց ստուգումներ և արդյունքում պարզվել է, որ նրանց կողմից Ա/Ձ Արտուշ Պապոյանին հաշիվ ապրանքագրեր /հիմնավոր փաստաթղթեր/ համախառն եկամտից նվազեցումներ կատարելու համար չեն տրամադրվել: Վերը նշված փաստը հիմնավորվել է նաև «ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության աշխատակիցներին տնտեսավարող սուբյեկտների կողմից տրված բացատրությունների միջոցով:

Ըստ առկա տվյալների ԱՁ-ն անհիմն ավել է ցույց տվել եկամտահարկի տարեկան հայտարարագրերում արտացոլված ծախսերը համապատասխանաբար՝ 2008թ-ին 3683200 դրամ, 2009թ-ին 15212500 դրամ և 2010թ-ին 14491400 դրամ: Խախտվել են «Եկամտահարկի մասին» «Օրենքի 15-րդ հոդվածի պահանջները: Նույն օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն լրացուցիչ վճարման ենթակա եկամտահարկի գումարը կազմում է ընդամենը 6446400 դրամ:

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» «Օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրույթներն ընդամենը եկամտահարկի գծով վճարման ենթակա է 13693600 դրամ:

Ստուգման ակտի 4-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

հաշվի առնելով այն փաստը, որ տնտեսավարող սուբյեկտների կողմից Ա/Ձ Արտուշ Պապոյանին հաշիվ ապրանքագրեր դուրս չեն գրվել, իսկ թվով երկու Ա/Ձ-ների մոտ, որտեղ հանդիպակաց ստուգումներ չեն իրականացվել, տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն ԱԱՀ վճարող չեն հանդիսացել, հետևաբար 2008թ-ի 4-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկում ԱԱՀ-ի հաշվանցման գումարն ավել է ցույց տրվել 1066800 դրամի չափով, որի հետևանքով բյուջե պակաս է հաշվարկվել և վճարվել ԱԱՀ նույն գումարի չափով:

Խախտվել է <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որի համար հիմք ընդունելով <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 43 հոդվածի, <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածների դրույթները ԱԱՀ-ի գծով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 2146400 դրամ:

<Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի <զ> ենթակետի և 5-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները խախտելու համար հիմք ընդունելով նույն օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի դրույթները, ստուգման ակտի 15-րդ կետով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 3807800 դրամ սոցիալական վճար:

Ա/Ձ Արտուշ Պապոյանի դիմում-բողոքում մասնավորապես նշված է, որ իր կողմից գործունեությունը իրականացվում է <Ղ-Տելեկոմ> ՓԲԸ-ի հետ 2006թ-ին կնքված պայմանագրի համաձայն: Պայմանագրին կից 29.06.2007թ-ին կնքված համաձայնագրի 1-ին կետի համաձայն, դիվերը ոչ պակաս 30 տոկոսը պետք է պահի իրեն, որը 2008թ-ին կազմել է մոտ 39 տոկոս, 2009թ-ին՝ 39 տոկոս, 2010թ-ին՝ 39 տոկոս: Բերված թվերը վկայում են, որ Ա/Ձ-ն չի ուռճացրել ծախսերը ի հաշիվ վաճառակետերի:

Ըստ դիմում-բողոքի, Ա/Ձ Արտուշ Պապոյանը լիցքավորման քարտերի և հեռախոսային լիցքերի վաճառքն իրականացնում է վաճառակետերի միջոցով, ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց միջոցով: Ըստ Ա/Ձ Արտուշ Պապոյանի, ստուգման ընթացքում իր կողմից իրականացված գործունեության վերաբերյալ իրատեսական կարծիք կազմելու համար <Ղ-Տելեկոմ> ՓԲԸ-ից պետք է պահանջվեին Ա/Ձ Արտուշ Պապոյանի վաճառակետերի ցանկը, հատկապես հեռախոսով լիցք վաճառողների, որոնց թիվը կազմում է մոտ 183 հատ: Բացի այդ, ստուգման ընթացքում <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի դրույթի կիրառման դեպքում հնարավոր կլիներ պարզել դիվերային գործունեությունից ձևավորվող իրական եկամտաբերության աստիճանը:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Արտուշ Պապոյանը խնդրում է կասեցնել ստուգման ակտի պահանջների կատարումը և նշանակել նոր ստուգում (վերստուգում):

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Արտուշ Պապոյանի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Ա/Ձ Արտուշ Պապոյանը, իր և <Ղ-ՏԵԼԵԿՈՄ> ՓԲԸ միջև կնքված պայմանագրերի համաձայն, ստուգվող ժամանակաշրջանում վճարովի հիմունքներով մատուցել է ընկերությանն քարտերի տարածման, ինչպես նաև վերջինիս հանձնարարությամբ կանխավճարների ընդունման (բաժանորդների հաշիվների լիցքավորման համար) ծառայություններ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Արտուշ Պապոյանի մատուցած ծառայությունները կրում են սպեցիֆիկ բնույթ և այդ գործունեության ընթացքում ստացվող եկամուտների ու կատարվող ծախսերի ձևավորման եղանակներն, ըստ էության, տարբերվում են գործունեության այլ ոլորտներում մատուցվող ծառայությունների նմանատիպ արդյունքներից, հետևապես Ա/Ձ Արտուշ Պապոյանի կողմից իրականացված

գործունեության՝ մատուցված ծառայության արդյունքների վերաբերյալ իրատեսական կարծիք կազմելու համար անհրաժեշտ է գնահատել և վերլուծել սույն գործին առնչվող բոլոր ապացույցները:


Ա/Ձ Արտուշ Պապոյանի կողմից ներկայացվել են փաստաթղթեր, որոնք պարունակում են համապատասխան տեղեկատվություն ստուգվող ժամանակաշրջանում Ա/Ձ Արտուշ Պապոյանի իրականացված գործունեության վերաբերյալ: Մասնավորապես, ներկայացվել են ստուգվող ժամանակաշրջանում իրականացված գործարքների վերաբերյալ տվյալներ (էլեկտրոնային լիցքերի վաճառքի վերաբերյալ), որոնք ստուգման ընթացքում, ըստ էության, պատշաճ ուսումնասիրության չեն ենթարկվել: Հանձնաժողովի համոզմամբ, հիշատակված տեղեկություններում արտացոլված տվյալները լրացուցիչ ուսումնասիրության և վերլուծության կարիք ունեն, պարզելու համար, անհատ ձեռնարկտիրոջ կողմից իրականացված գործարքների, ինչպես նաև ստացված եկամուտների և կատարված ծախսերի իրական մեծությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Արտուշ Պապոյանի իրականացված գործունեության արդյունքում ձևավորված եկամուտների և կատարված ծախսերի իրական չափն ըստ էության հնարավոր կլինի պարզել Ա/Ձ Արտուշ Պապոյանի մոտ բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերստուգում կատարելու միջոցով, որի ընթացքում վերջինիս գործունեությանն առնչվող փաստաթղթերն ու ապացույցները կենթարկվեն բազմակողմանի և ամբողջական ուսումնասիրության:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ա/Ձ Արտուշ Պապոյանի 02.11.2012թ. թիվ Ա/Ձ-07 դիմում-բողոքով բերված պահանջը՝ բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերստուգում կատարելու վերաբերյալ, բավարարել:



Հանձնաժողովի նախագահ՝

S.ՔԱՐՍԵՂՅԱՆ